

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ  
ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՀԱՇՎԻՆ**

Կազմակերպության գործունեության արդյունքների գնահատման համար կարևոր նշանակություն ունեն հետևյալ երեք ցուցանիշները.

1. արտադրանքի իրացումից զուտ հասույթ,
2. շահույթ,
3. դրամական միջոցների հոսքեր:

Այս ցուցանիշների բացարձակ մեծությունները և տարվա ընթացքում դրանց փոփոխությունների դինամիկան ցույց են տալիս կազմակերպության գործունեության արդյունավետությունը<sup>1</sup>: Մինչդեռ կազմակերպության վճարունակության պահպանման գործում առաջնային նշանակություն են ձեռքբերում գործունեության տարբեր տեսակների գծով դրամական միջոցների հոսքերի կառավարումը:

Անհրաժեշտ է այնպես կառավարել դրամական հոսքերը, որ պեսզի ապահովվի առավելագույն եկամտաբերություն և միաժամանակ պահպանվի ակտիվների իրացվելիության բարձր մակարդակ: Գործնականում դա նշանակում է որոշել և պահպանել եկամտաբերության և իրացվելիության ընդունված հարաբերակցությունը:

Կազմակերպության դրամաշրջանառության կառավարումը հանդիսանում է ամբողջ գործունեության կառավարման համակարգի բաղկացուցիչ տարրը և հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1. Դրամական հոսքերի կառավարման գործընթացը պետք է ապահովված լինի անհրաժեշտ տեղեկատվական տվյալներով,

2. Կազմակերպության դրամական հոսքերի ուղղությունների բազմազանությունը պահանջում է ապահովել դրանց հավասարակշռությունը՝ ըստ տեսակների, ծավալների, ժամանակի և այլ բնորոշ հատկանիշների:

3. Առանձին ժամանակահատվածներում դրամական միջոցների մուտքագրումներն ու ելքագրումները չեն կրում հավասարաչափ բնույթ, ինչը հանգեցնում է ժամանակավորապես ազատ դրամական միջոցների ձևավորմանը, որոնք ունեն ոչ արտադրական բնույթ և ժամանակի ընթացքում կորցնում են իրենց արժեքը ինֆլյացիայի և այլ գործոնների ազդեցությամբ:

---

<sup>1</sup> Поляк Г. Финансовый менеджмент: Учебник для вузов. — М.: Волтерс Клувер, 2009. 608 с.

4. դրամական հոսքերի առանձին տեսակների գծով հոսքերի զգալի անհավասարաչափությունը պատճառ է հանդիսանում ժամանակավոր դեֆիցիտի առաջացման համար, ինչը բացասաբար է անդրադառնում կազմակերպության վճարունակության վրա: Հետևաբար, դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում անհրաժեշտ է ապահովել դրամական միջոցների իրացվելիության բավարար մակարդակ: Դրամական հոսքերի արդյունավետ կառավարման դեպքում.

- կազմակերպության զարգացման գործընթացում ապահովում է ֆինանսական հավասարակշռություն: Ջարգացման տեմպերն ու ֆինանսական կայունությունը որոշ չափով կապված են դրամական միջոցների հոսքերի՝ ձիշտ ժամանակին և ծավալով ձևավորման հետ:
- թույլ է տալիս կրճատել կազմակերպության պահանջը փոխառու միջոցների նկատմամբ՝ ապահովելով սեփական ֆինանսական ռեսուրսների ռացիոնալ ու խնայողաբար օգտագործումը:
- նպաստում է լրացուցիչ ներդրումային ռեսուրսների ձևավորմանը, որոնք կարող են ներդրվել շահավետ ոլորտներում և կազմակերպության համար դառնալ լրացուցիչ շահույթի աղբյուր:
- ապահովում է անվճարունակության առաջացման ռիսկի կրճատում :


Դրամական հոսքերի կառավարման հիմնական նպատակն է կազմակերպության գործունեության ընթացքում ապահովել ֆինանսական հավասարակշռություն դրամական հոսքերի մուտքերի և ելքերի տեսակետից: Կառավարման գործընթացը դրսևորվում է դրամական հոսքերի օպտիմալացման ուղիների բացահայտմամբ, այդ հոսքերի հավասարակշռվածության, ժամանակին տեղի ունենալու ուղիների մշակմամբ, դրանց վրա ազդող ներքին և արտաքին գործոնների բացահայտմամբ և ֆինանսական կարևոր ցուցանիշների վրաազդեցության չափերի որոշմամբ<sup>2</sup>:

Առաջին հերթին անհրաժեշտ է հասնել դրական և բացասական դրամական հոսքերի հավասարակշռվածության, քանի որ դրամական ռեսուրսների պակասորդը կամ ավելցուկը բացասաբար են անդրադառնում կազմակերպության գործունեության վրա:

---

<sup>2</sup> Методика финансового анализа / под ред. А.Д. Шеремета, Р.С. Сайфули-на, Е.В. Негашева. Учебное пособие. — 3-е изд., перераб. и доп. - М.: Инфра-М, 2001. 176 с.

Դիտարկենք կազմակերպության դրամական միջոցների դեֆիցիտի առաջացման հիմնական պատճառները.




*Գծապատկեր 1.* Դրամական միջոցների անբավարարության հիմնական պատճառները

Դեֆիցիտային դրամական հոսքերի դեպքում նվազում է կազմակերպության իրացվելիությունը և վճարունակության մակարդակը, ինչը հանգեցնում է ժամկետանց կրեդիտորական պարտքերի աճին (լինի դա բանկի նկատմամբ, մատակարարներին, աշխատակիցներին աշխատավարձի գծով) և, որպես հետևանք, երկարաձգվում է ֆինանսական ցիկլի տևողությունը, կրճատվում կապիտալի շահութաբերությունը<sup>3</sup>: Այն դեպքում, երբ կազմակերպությունը լրացուցիչ շահույթ ստանալու նկատառումներից ելնելով, ձգտում է

<sup>3</sup> Шеремет А. Д., Негашев Е. В. Методика финансового анализа деятельности коммерческих организаций. — М. Инфра-М, 2008. 208 с.


դրամական հաշիվների վրա քիչ գումար պահել, ապա երբեմն առաջանում է դրամական միջոցների անբավարարության խնդիր, որի հետևանքով կազմակերպությունը ստիպված է լինում վաճառել հեշտ իրացվելի ակտիվները:

Ղեֆիցիտային դրամական հոսքերը հավասարակշռելու նպատակով կարճաժամկետ հատվածում միջոցառումներ են մշակվում դրամական միջոցներ ներգրավելու գործընթացի արագացման և վճարումներ իրականացնելու դանդաղեցման ուղղությամբ:



Գծապատկեր 2. Կարճաժամկետ միջոցառումներ՝ ուղղված դրամական հոսքերի հավասարակշռմանը

Քանի որ նշված միջոցառումները, բարձրացնելով կազմակերպության բացարձակ վճարունակության մակարդակը կարճաժամկետ հատվածում, ապագայում կարող են դրամական միջոցների անբավարարության հետ կապված խնդիրներ առաջացնել, ապա անբավարարության դեմ պարբերաբար պետք է մշակվեն երկարաժամկետ բնույթի միջոցառումներ:



Գծապատկեր 3. Երկարաժամկետ միջոցառումներ՝ ուղղված դրամական հոսքերի հավասարակշռմանը

Ավելցուկային դրամական հոսքերի դեպքում ժամանակավորապես ազատ դրամական միջոցները ինֆլյացիայի արդյունքում կորցնում են իրենց իրական արժեքը, կորուստ է համարվում նաև այդ միջոցների՝ գործառնական կամ ներդրումային գործընթացներում ուղղելու արդյունքում պոտենցիալ եկամուտը: Հետևաբար, յուրաքանչյուր կազմակերպություն իր գործունեության ընթացքում պետք է ուշադրություն դարձնի շատ կարևոր մի խնդրի, այն է՝

պահպանե՞լ ընթացիկ վճարունակության մակարդակը, թե ազատ դրամական միջոցներն ուղղել ներդրումների իրականացմանը: Ընթացիկ գործունեության հետ կապված ծախսերի իրականացման համար անհրաժեշտ է ունենալ կանխիկ դրամի որոշակի մակարդակ, որի պահպանումը կապված է այնպիսի ծախսերի հետ, որոնց հաշվարկումը իրականում հնարավոր չէ: Այդ իսկ պատճառով ընդունված է իրացվելիության մակարդակի պահպանման գին համարել պետական արժեթղթերում դրամական միջոցների միջին մնացորդի ներդրման արդյունքում ստացվելիք եկամուտը, դա հիմնավորվում է այն հանգամանքով, որ պետական արժեթղթերը քիչ ռիսկայնություն ունեն, հետևաբար դրամական միջոցներն ու այդ արժեթղթերը ընդունվում են որպես ռիսկայնության միևնույն մակարդակ ունեցող ակտիվներ:

Ավելցուկային դրամական հոսքերի օպտիմալացման ուղիները հիմնականում կապված են կազմակերպության ներդրումային գործունեության ակտիվացման հետ` ուղղված

- երկարաժամկետ բանկային վարկերի` ժամկետից շուտ մարմանը,
- իրական ներդրումների ծավալի ավելացմանը,
- ֆինանսական ներդրումների ծավալի ավելացմանը:

Դրամական հոսքերի ժամանակային համապատասխանեցումը (սինխրոնիզացիա) պետք է ուղղված լինի սեզոնային և ցիկլային տարբերությունների վերացմանը ինչպես դրական ուղղվածությամբ դրամական հոսքերի, այնպես էլ բացասական հոսքերի ձևավորման ժամանակ, ինչպես նաև կանխիկ միջոցների միջին մնացորդի օպտիմալացմանը:

Օպտիմալացման վերջնական փուլ է հանդիսանում կազմակերպության զուտ դրամական հոսքերի մաքսիմալացման պայմանների ապահովումը, վերջինիս աճը ապահովում է կազմակերպության ինքնաֆինանսավորման բարձր մակարդակ` կրճատելով ֆինանսավորման արտաքին աղբյուրներից կախվածությունը:

## АННОТАЦИЯ

**Тегмине Степанян, К. Э. Н.**

АГЭУ

### **УЛУЧШЕНИЯ ПЛАТЕЖЕСПОСОБНОСТИ КОМПАНИИ ЗА СЧЕТ ОПТИМИЗАЦИИ ДЕНЕЖНЫХ ПОТОКОВ**

Денежные потоки определяют хозяйственную деятельность компании. Они могут быть представлены в виде системы «финансовой циркуляции крови» компании. Эффективная организация денежных потоков является предпосылкой высоких результатов экономической деятельности, а так же способствует финансовому оздоровлению организации. Эффективное управление денежным потоком позволяет уменьшить потребности в заимствованиях, обеспечивая экономное использование собственных финансовых ресурсов, снижая зависимость компании от кредитов. Этот вопрос особенно актуален для развивающихся организаций, так как эти организации имеют ограниченные возможности финансирования от внешних источников.

## ANNOTATION

**Tehmine Stepanyan, Doctor of Economics**

ASUE

### **IMPROVAL OF THE SOLVENCY OF THE COMPANY DUE TO THE CASH FLOW OPTIMIZATION**

Cash flows define economic activities of the company. They can be presented in the form of a «financial circulation» of the company. Efficient organization of cash flows is the prerequisite of economic performance of the company, as well as it contributes to the financial health of the organization. Effective cash flow management helps to reduce borrowing needs by providing economical use of its own financial resources, reducing the company's dependence on loans. This question is particularly relevant for developing organizations as these organizations have limited funding from external sources.